ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
«ՌՈՒԲԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

2200, ՀՀ Կոտայքի մարզ,ք. Աբովյան, Հատիսի փողոց 6, Հեռ. (+374 222) 2 18 30, էլ.փոստ abovyanmedcentre@bk.ru

01.04.2025 թվական N219

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ
ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ ՌՀԱԲԿ ԷԱԱՊՁԲ 25/15-01 Բիզնես Ընթացքինգ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

<<Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն իր կարիքների համար հայտարարել է հեռուստացույցների ձեռքբերման ՌՀԱԲԿ ԷԱԱՊՁԲ 25/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ , որին մասնակցել է թվով ութ մասնակից:

Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից Բիզնես Ընթացքինգ ՍՊԸ-ն ԷԱՃ համակարգի միջոցով ինքնաշխատ ձևով ընտրվել է առաջին տեղը զբաղեցրած, սակայն ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /հավելված 1,1/ բացակայել է հրավերով սահմանված պահանջը՝ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թվ թիվ 526-Ն որոշման /այսուհետ Կարգ/ 41կետի և հրավերի 4,3կետի 3-րդ ենթակետի պահանջները 19,03,2025թ թիվ 2 արձանագրությունով ծանուցել է Բիզնես Ընթացքինգ ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան շտկում՝ մասնավորապես առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /հավելված 1,1/ նշել ֆիրմային անվանումը , ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Բիզնես Ընթացքինգ ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի կատարվել: Կարգի 42-րդ կետի համաձայն Բիզնես Ընթացքինգ ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար, ընթացակարգը՝ չկայացած: Կարգի 32-րդ կետի 19 -րդ ենթակետի համաձայն այն է՝եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ՝

Ղեկավարվելով „Գնումների մասին„ ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով Լիազոր մարմինը մասնակցին ներառում է գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Որոշում եմ Բիզնես Ընթացքինգ ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

☎ (0222) 2-33-59